



ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՆՈՒՄ.— Նույնմերի 16-ին, Երևանում, Հայաստանի Արվեստի աշխատողների տանը կազմակերպվեց երեկո՝ նվիրված Հունական գրականությանը, Երեկոյին մասնակցում էին գրականագետներ, գրողներ, մշակույթի և արվեստի գործիչներ, գրականության սիրողներ, ուսանողներ։ Բացման խոսքով Հանդես եկավ գրող Նաիրի Զարյանը։ Հունական գրականության մասին բովանդակալից զեկուցում կարդաց պրոֆ. Ա. Առաքելյանը։

Երեկոն կազմակերպել էին Արտասահմանյան երկրներին հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը և խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեն։

ԱԿԱԳԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄՅԱՆԸ ԿԱՆԱԴԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՄ.— Կանադայի թագավորական աստղագիտական ընկերության պրեզիդենտ, պրոֆ. Մակ-Կելլերը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային նամակ է ուղարկել, որի մեջ հաղորդվում է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, որպես աստղագիտության ակադեմիկոս ներկայացուցիչ, ընտրված է Կանադայի թագավորական աստղագիտական ընկերության պատվավոր անդամ։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը արտասահմանյան տասը ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ է, անդամ և թղթակից անդամ։

ՇԻՒԼԵՐԻ ԵՆԵԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՆՈՒՄ.— Նույնմերի 10-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված գերմանական հանճարեղ գրող Իոհան Ֆրիդրիխ Շիլլերի ծննդյան 200-ամյակին։ Երեկոն կազմակերպել էին Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը,

Հայաստանի սովետական գրողների միությունը և Հայկական թատերական ընկերությունը։

Երեկոն բացեց պրոֆ. Վ. Վարդանյանը։

Շիլլերի կյանքի և ստեղծագործության մասին բովանդակալից զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Սողոմոնյանը։

Հայաստանի Պետական ռեսպուբլիկական գրադարանը Շիլլերի 200-ամյակի առթիվ կազմակերպեց ցուցահանդես, որտեղ գեղանկերին, տնդերին, Փրանսերին, ռուսերին և այլ թարգմանությունների կողքին զետեղված էին նաև մեծ գրողի գործերի հայերեն թարգմանությունների հրատարակությունները, Յուցահանդեսը այցելողները մեծ հետաքրքրությամբ ծանոթանում էին «Դոն Կարլոս», «Օրլանդի կույսը» գործերի 1878 թվականի, «Մարիա Սալուարա» ողբերգության 1884 թվականի և այլ աշխատությունների հայերեն հին հրատարակություններին։

ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Նույնմերի 11-ին Երևանի Կերպարվեստի սրահում բացվեց Հայաստանի նկարիչների կիրառական արվեստի ցուցահանդես։ Կիրառական արվեստի բազմաթիվ ցուցադրված նմուշները մեծ հետաքրքրությամբ են գիտում ցուցահանդեսին այցելող բազմաթիվ աշխատավորները։

Յուցահանդեսը կազմակերպել են Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրությունը, Կերպարվեստագետների միությունը և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը։

ՄԱՀ ԱՐԻՍ ԵԱՔՅԱՆԻ.— Նույնմերի 13-ին վախճանվեց բանաստեղծ և արձակագիր Արիս Մկրտիչ Եաքյանը։ Նա ծնվել է 1900 թվականին Կլիկիայի Չոք-Մարզի (Դյուրթ-Յոլ) քաղաքում։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Որպես ուսուցիչ աշխատել է Ալեքսանդրոսի, Դամասկոսի և այլ հայաբնակ քաղաքների դպրոցներում։ Աշխատակցել է «Անահիտ», «Անի», «Նոր գիր», «Միաժան» պարբերականներին և

բազմաթիվ այլ թերթերի և ամսագրերի: Արտասահմանում մի շարք անգամներ հրատարակվել են նրա բանաստեղծությունների և հեքիաթների ժողովածուները:

Արտասահմանից Հայրենիք ներգաղթելով Արիս Եաբլյանը մեծ հռչանդով և նոր ավյունով շարունակում է իր գրական գործունեությունը: Սովետական Հայաստանում լույս են տեսնում նրա «Մեր Հայաստանն է», «Բախտն ու աշխատանքը», «Ինձանից բեղի խրատ»

հեքիաթների, պատմվածքների և ակնարկների ժողովածուները և «Ֆելլահները» վեպը:

ՕՄԱՐ ԽԱՅԱՄԻ «ՔԱՌՅԱԿՆԵՐ»-Ը.— Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս ընծայեց Արևելքի խոշոր բանաստեղծ և փիլիսոփա Օմար Խայամի «Քառյակներ»-ը, որի թարգմանիչն է Աբդակ Աթայանը: Այս հրատարակության մեջը ընդգրկված է 826 քառյակ: Որպես առաջարան տպագրված է պրոֆ. Աղայանի հոգվածը՝ նվիրված բանաստեղծի կյանքին և ստեղծագործությունը:

